

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ս. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ, Մ. ԶՈՒՄՈՒՆՅ

## ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Պատմական Սյունիք նահանգի Հաբանդ գավառի տեղանունների մասին ուսումնասիրություններն այդքան էլ շատ չեն: Հայտնի է, որ ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի ենթամարզը (նախկին ՀԽՍՀ Գորիսի շրջանը), բացառությամբ արևմտյան ծայրամասի (Տաթև, Սևարանց, Հարծիս և այլն), մտնում էր Հաբանդ գավառի մեջ: Ստ. Օրբելյանի հարկացուցակում հիշատակվում են գավառի 59 բնակավայրեր: Դրանցից ինն այսօր էլ իրենց հին անուններով կան Գորիսի ենթամարզում՝ Խնձորեսկ, Խանաձախ, Հալե (Հալիձոր), Տեղ, Շոունոխո (Շունունոխ), Վաղատու (Վաղատուր), Ականա (Ակներ), Շնո-հերք (Շինուհայր), Խտտ: Իրենց անունները պահպանել են նաև պատմիչի կողմից ծղուկ գավառում հիշատակված, բայց այսօր Գորիսի ենթամարզում գտնվող Տաթևն ու Հարծիսը:

Սյունիքի Հաբանդ գավառի մեջ մտնող բնակավայրերի անունների ստուգաբանությամբ կամ դրանց տեղադրության հարցերով զբաղվել են Դ. Ալիշանը, Ե. Լալայանը, Հ. Հյուբշմանը, Ս. Բարխուդարյանը, Ալ. Մարգարյանը, Ս. Ումառյանը, Ա. Ղարազյոզյանը և այլք: Նրանք շնորհակալ գործ են կատարել՝ տալով այս կամ այն տեղանվան գիտական բացատրությունը կամ փորձելով ճշգրտել բնակավայրերի տեղադրությունը: Այնուամենայնիվ, պատմիչի թվարկած ոչ բոլոր տեղանուններն են մեկնաբանված կամ ճիշտ տեղադրված: Այդ գործը շարունակական է. որոշ հարցերի լուսաբանման ու ճշգրտման մի փորձ է այս աշխատանքը:

### ՇԱՔԱՌՈՒ—ՇԱԳՎԱ ՍՈՒՐ

Գորիս քաղաքի հարավարևմտյան բարձրադիր մասով՝ *Թոզ-կապից*՝ այն կողմ, գերեզմանաբլրի արևմտյան ստորոտով հոսող առուն կոչում են *Շաքարաջուր*, իսկ ձորը՝ *Շաքարաջրի ձոր*: Սակայն տարեցները տեղանքը *Շաքառու ձոր* են կոչում: Տեղավայրի հետ կապված ավանդազրույցներին քաջածանոթ Ս. Խանզադյանը առուն կոչել է նախնական անվանն ավելի համահունչ ձևով՝ *Շաքառու-ջուր*: *Շաքառու*—ն *շաք(ար)* և *առու* բառերից կազմված բարդություն է: Գուցե ավելի վաղ այն պարզապես կոչվել է *Շազվա առու(ջուր)*, իսկ ժողովուրդը պահպանել է *Շաքառու* ձևը: Գորիսի բարբառում *գ*-ից *ք*-ի անցման բազում օրինակներ կան, ինչպես *ազի-հաքու* պարագա-

յում, այս բառի համար, սակայն, կարծում ենք՝ գրականացման մոտեցում է ցուցաբերված: **Շաքվա**–ն հնարավոր է առաջացած լինի **շաք(զ)ար** և **առու** բառերի բաղադրությամբ, ապա փոխազդեցական հնչյունափոխությամբ սղվել են **շաքար**–ի վերջին ար–ը և **առու** բառի **առ**–ը՝ **շաք+ու**, որն էլ հետագայում առկայացել է հոլովված ձևով, քանի որ բարբառում տարածված է նաև տեղանունների վա հոլովում ստանալը. հմտ.՝ **Բաբու**–**Բաքվա**, **Շուշի**–**Շուշվա** և այլն: Գետազայում մթագնել է բառի կազմությունը, և այն հանդես է եկել այլ բառերի կցմանը–հարակցությամբ՝ բարբառում՝ **Շըք՝արածրի ծ՛որ**, **քոլ** և այլն: **Շաքառուն** թույլ է տալիս բացահայտելու մի հին գյուղանուն: Առվի վերին հոսանքի ծախակողմյան բարձունքում կա կիսավեր եկեղեցիով ու քարավանատնով հին գյուղատեղ: Ամենայն հավանականությամբ՝ դա Ստ. Օրբելյանի հարկացուցակում հիշատակված Զաբանդ գավառի միջին մեծության **Շազվա** բնակավայրն է, որը տասը միավոր հարկ է վճարել Տաթևի վանքին՝: Քարավանատան գոյությունը վկայում է, որ այն եղել է ուղիների հանգուցակետ: **Շազվա** – **առուն** միջին հոսանքում իր մեջ ներառում է **Ղոճոտի՛** աղբյուրի վարար ջուրը: **Շազվա** գյուղատեղի դիմաց **Սաղդի լիճն** է: Շազվա **առուն** սնվում է նաև լճակի արևելյան կողմում գտնվող շամբուտի ջրերից: **Շազվա առվի** երկայնքի ծորայգիների, հողերի մեծ մասը պատկանել է Գորիսում հայտնի Սաղդյան (Բաղդազյուլյան) տոհմին: Սաղդն ապրել է 19–րդ դարի կեսերին, որի անունով էլ հետագայում հիշվել է լիճ–ջրամբարը:

### ԸՂՏԻՅԱՅԻ – ԱՂՈՋՐԻԿԻ ՏԱՓ

Ստ. Օրբելյանի կողմից Զաբանդ գավառի մեջ հիշատակված և Տաթևի վանքին ութ միավոր հարկ վճարող **Աղոջրիկ** փոքր բնակավայրի տեղադրության կամ տեղանվան ստուգաբանության հարցերով զբաղվել են Ե. Լալայանը, Գ. Գյուրջմանը, Ա. Ղարազյոզյանը, Ս. Խանգադյանը և այլք: Անտարակուսելի է Ա. Ղարազյոզյանի այն հետևությունը, որ **Աղոջրիկն** իր անունը կարող էր ստանալ **Շոր ջուր** վտակը կազմող սելտերյան աղբյուրներից<sup>9</sup>: Այո, կրաքարային լեռներից սնվող այդ վտակի ջուրը խմելու համար պիտանի չէ: Գորիսի բարբառով ասած՝ ջուրն **աղի–աղու** է՝ **շոր (շոռ)**, **դառը**: Այստեղից էլ բնակավայրի **Աղոջրիկ** անվանումը: **Աղո**–ն **աղ** բառի սեռական հոլովն է: Դրա մասին խոսել է Գ. Գյուրջմանը «**աղ–աղույ**» սեռական **աղի** բառին կցվել է **ջրիկ**, այս է **ջուր** և **իկ** մասնիկները<sup>10</sup>: Կասկած չի հարուցում նաև Ա. Ղարազյոզյանի կողմից **Աղոջրիկի** տեղադրությունը: Այն գտնվել է Գորիս քաղաքի հյուսիսարևելյան մասում լեռնալանջն ակոսող **Շոր** կամ **Շորին** կոչվող երկար ու խոր ծորի միջնամասը կազմող **Ճակերի ծորում**: Այդտեղ ծորը փոքր ինչ լայնանում է: Զորալանջերին մնում են արիեստական քարայրներ, նշարվում են ծխնելույզի անցքեր, իսկ ծորամիջին կա հին, տեղում արդյունահանված սպիտակ, չէջոտ քարից (տեղացիները կոչում են **Շոր քար**) կառուցված եկեղեցու ավերակներ: **Շոր ջուր** վտակը **Ճակերի ծորից** հետո անցնում է իրար կպած **Իվանի ծորով**, **Թանգուն** ընդարձակ ծորով և դուրս գալիս քաղաքի տարածք:

Գորիս քաղաքում **Աղոջրիկ** տեղանվան հետքը մնացել է: Սակայն դրա վրա որևէ մեկը ուշադրություն չի դարձրել: Եթե պահպանված տեղանվան ստուգա-

բանությունը ստույգ է, ուստի այն, անշուշտ, գալիս է լրացնելու ու վերահաստատելու *Աղոթրիկ* բնակավայրի տեղադրության վերոհիշյալ պնդումը. Գորիս քաղաքի հյուսիսարևելյան բարձրադիր թաղամասը բնակիչները կոչում են *Ըղջիյազի*՝ Այն գտնվում է *Ճակերի ծորի* աջափնյա տափարակում: Խորհրդային իշխանությունը 20-րդ դարի կեսերին հիմնադրված բնակելի թաղամասը, ուր մինչ այդ ցորենի կամ գարու արտեր էին, պաշտոնապես կոչել է *Ավանգարդ*՝ Ս. Խանգադյանը *Ըղջիյազին* ստուգաբանել է ոչ ճիշտ՝ *Իղժիազ* (*խճավազ*) ձևով՝ Ամենայն հավանականությամբ՝ *Ըղջիյազին* ժամանակին կոչվել է *Ըղջրի տափ*: *Ճակերի ծորից* (ուր *Աղոթրիկ* գյուղն էր), ելնող աջակողմյան արահետը դուրս է գալիս այդ տափարակը: Վարուցանքի համար պիտանի տափարակը պատկանել է ծորի մեջ խեղդված *Աղոթրիկին* և կոչվել է *Աղոթրիկի տափ*՝ Բառի ստուգաբանությունից պարզվում է, որ այն կազմված է *աղի+ջուր+յազի* արմատներից: Այլուիքի տարածաշրջանում տարածված տեղանունները սովորաբար ունենում են բարդ կազմություններ, որ հետագայում շատ հաճախ մթազնում են բաղադրիչների ընդհանուր հնչյունական կազմը: *Ըղջիյազի* արմատի վերջին բաղադրիչը հիմնականում բացահայտված է՝ *յազի/ը*– (*yazi*) թուրք. «տափ», «հարթություն», «ղաշտավայր» և այլն: *Տափ* վերջադիր արմատով տեղանունները Գորիսում տարածված են՝ *Տանձատափ*, *Վանքի տափ* և այլն: Ինչպես հայերենի որոշ տարբերակներում, այնպես էլ Գորիսի բարբառում մի քանի բառերի առաջադիր *ա* հնչյունը, կորցնելով շեշտը, հնչյունափոխվում է *ը*–ի, այդ թվում *աղ* բառում: *աղի–աղաջուրը* հնչում է *ըղաջուր*: *Աղ* բառի սեռական հոլովածին հաջորդում է *ջ* հնչյունը, որն, անշուշտ, *ջուր* բառի հնչյունական մնացուկն է. հմնտ՝ *ջրաղաց–ջաղաց*: Այս արմատով կազմված բարդություններում հանդիպում են հնչյունների կորուստ. «Արդեն X դարի վիմագիր արձանագրություններում վկայություններ ունենք *ջրաղաց* բառի հնչյունափոխված ժողովրդական բառածնի վերաբերյալ»<sup>10</sup>: Նույնիսկ պետք է կարծել, որ *ըղջ* (*աղի ջուր*) ձևը բարբառներում ավելի վաղ է տարածված եղել՝ մինչև Ստ. Օրբելյանը: Բառի՝ «Պատմության» մեջ հիշատակված *Աղոթրիկ* ձևը հեղինակային միջամտությամբ զրականացվել է. *Աղոթրիկի տափը* հնչյունափոխվելով կարող էր դառնալ *Ըղջրիտափ*, *Ըղջի–տափ*: Սիս այս տեղանունն է, որ հետագայում քոչվորների կողմից թարգմանվել է թուրքերեն *տափ–յազի*, և այդպես էլ մնացել է *Ըղջրի–Ըղջի–յազի*: Արձակայքում կան թուրքերեն թարգմանված ուրիշ տեղանուններ ևս՝ *Ուլթափա–Եռաբլուր*, *Ղարա գ'ուլ–Սև լիճ*, *Ղազի գ'ուլ–Սազի լիճ* և այլն: Այսպիսով՝ Գորիս քաղաքի *Ըղջիյազի* թաղամասն իր անվան մեջ պահպանում է *Աղոթրիկ* հայկական սքանչելի տեղանվան հետքը:

## ՍՆՉԿԱՅԷ

*Քարահունքը* Գորիսի նշանավոր գյուղերից է. այն իր թթղիով հանրապետությունում ճանաչման է արժանացրել ողջ շրջանը: Եվ, սակայն, որքան էլ զարմանալի է, Ստ. Օրբելյանը Հաբանո գավառի մեջ չի նշում *Քարահունք* անունով բնակավայր: Պատմիչի կողմից *Քարունք–Քարահունքը* հիշատակվում է *Այլախ* գավառում և դա, բնականաբար, այսօրվա Գորիսի *Քարահունք*

ըը լինել չէր կարող: Կան ենթադրություններ, որ Գորիսի *Քարահունք* գյուղանունը վերանվանություն է, և դա արել են կամ *Այլախի Քարունք—Քարահունքից* այստեղ տեղափոխված վերաբնակիչները՝ կամ էլ, ինչպես պնդում է գյուղի վերակենդանացման ավանդագրույցը, բնակավայրը ոտքի է կանգնել և վերանվանակոչվել է Շահ—Աբասի բռնագաղթից խույս տված երեք նախիջևանցի եղբայրների կողմից, որոնք բերել էին նաև թթենու տունկեր: Նախիջևանում եղել է *Քարունք—Քարահունք* անունով խոշոր բնակավայր (քաղաքագյուղ)<sup>12</sup>:

Գորիսի տարածքում *Քարահունք* գյուղի հիշատակումը հանդիպում է 17—18-րդ դարերից սկսած<sup>13</sup>: Իսկ նախկինում ինչպե՞ս է անվանվել *Քարահունք* գյուղը...

Ներկայիս թեքության վրա գտնվող *Քարահունքի* վերին թաղի աղբյուրը և շրջակայքը կոչվում է *ԱՆՃԿ* Այստեղից դեպի սարահարթ կարելի է բարձրանալ քարաժայռերի միջով անցնող ուղիով: Ամենայն հավանականությամբ՝ այստեղ է եղել Ստ. Օրբելյանի կողմից Զաբանդ գավառի հարկացուցակում հիշատակված և 12 միավոր հարկ վճարող միջին մեծությամբ *ԱՆՃԿայք* բնակավայրը: Գյուղը ժամանակին դատարկվել է, հետո վերաբնակեցվել, և հին գյուղանունը մնացել է միայն բնակավայրի մի թաղամասում. *ԱՆՃԿայք* գյուղանունը կարող էր ծագել բնիկ հայերեն *անձուկ*՝ «կիրծ, նեղ անցք» բառից<sup>14</sup>: *Քարահունք* գյուղից մի փոքր հարավ՝ *Վարարակն* գետի աջակողմյան լեռնալանջին, կա հին գյուղատեղ, որը և կարող է լինել պատմիչի հիշատակած ավելի փոքր, 6 միավոր հարկ վճարող երկրորդ *ԱՆՃԿայք* գյուղը:

Գալով այսօրվա *Քարահունք* բառի ստուգաբանությանը՝ նկատում ենք, որ այն *ԱՆՃԿ* գյուղը իր մեջ ներառող տարածքի անունից է՝ բաղկացած *Քար+ունք* արմատներից: Բառիմաստը բարբառային դրսևորումն ունի և մի այլ տեղանվան փոխանցումը չէ. \**kar-*՝ + *ունք*<sup>16</sup> – «տակ», «խորք», «հատակ»: *Քարահունք* բառի ժողովրդական արտահայտության ամենատարածված «*Քրունք*», ապա *ա* հոդակապի առաջացման և բառարմատի *ու*-ի ազդեցությամբ *հ* աճականի զոյությանբ՝ *Քրահունք* ձևերն են: Բարդության նմանությամբ Ղարաբաղի և Գորիսի բարբառներում տարածված ձևեր են *քարին տակ*, *քրատակ* – «քարատակ՝ ժայռի մեջ փորված անձավ» կամ «հիմնահատակ եղած»<sup>17</sup> բառերը: *Ունք* արմատի համար ԱԴԲ նշում է թուրք. *սс* «ծայր», որն, անշուշտ, չի ընտրվում հայերենի այս և նման բարդությունների համար: Թերևս հավանական կարելի է համարել Գորիսի և Ղարաբաղի բարբառներում տարածված *օնք—ունք* «մուր», «երկաթի ժանգ», «սարդոստայն», այստեղից՝ *օնքուտ—ունքուտ* «ունքով պատած», «ժանգոտած» բառը, քանի որ այդ տարածքի ժայռեղեն հյուսվածքը ժանգագույն է, ասել է թե՛ *քարածանգ*, որ կարող էր գյուղանունից անկախ—անջատ զոյություն ունեցած լինի տարածքի համար, որն էլ հետագայում վերականգնվել է:

#### ՎԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԿԱՐՔԻՆԷ

Ստ. Օրբելյանի հիշատակած Զաբանդ գավառի գյուղացուցակից հայտնի են դառնում նաև *Վերին և Ներքին Կարքինք* գյուղատեղերը: Ներկայիս *Խնձորեսկ* գյուղի հողատարածքում՝ գյուղից 2—3 կմ հյուսիս, կա *Կարք* հանդամասը *Գորիս—Խնձորեսկ* ավտոմայրուղու ավազահանքի բլրի շրջա-

կայքում: Բլրի լանջերին կարող է եղած լինել **Վերին Կարբինքը**, իսկ ոչ հեռու՝ դեպի **Ջարաշեն** գյուղի կողմը իջնող ծորակում՝ **Ներքին Կարբինքը**: «... մի յերկուց զուգից գիւղորայից Գաբանդայ, որք են Կարբինք Վերին և Ներքին, կամ Մակաղոց և Միւս Մակաղոց»<sup>16</sup>: Դրանցից յուրաքանչյուրը վճարում էր 8 միավոր հարկ: **Կարբի** տեղանունն ակադեմիկոս Գ. Չահուկյանը բխեցնում է ուրարտական արձանագրությունների կարբի – «ժայռ» հասարակ անունից<sup>17</sup>: Իր մյուս աշխատության մեջ հարցականի տակ է դրված բառի նշանակությունը. «qarbi/e «ժայռ» (?)– Կարբի (?)»<sup>18</sup> և ապա նշում, որ հնարավոր է՝ ուրարտական հասարակ անունը հետագայում կարող է տալ հատուկ անուն<sup>19</sup>: Չենք կարող ժխտել Ստ. Օրբելյանի նշված բնակավայրի անվան ուրարտական ծագմանը լինելը. նշված տարածքից մինչև **Ջարաշեն** գյուղի հյուսիսարևմտյան մասը զրեթե ժայռապատ է. համեմատելի օրինակ նույնպես հանդիպում է, ասենք՝ ուրարտական garini – «ամրոց», «բերդ» ձևից առաջացած լինի Գառնի տեղանուն–ամրոց<sup>20</sup>, բայց և այնպես, զուգահեռ եզրերից առաջացած տեսակետներ նույնպես հնարավոր են. հ – ե \*gʷer–, \*gʷor կամ \*gʷr – «քարակույտ», «լեռ» – ը հայերենում կտա **“կեր, կոր** կամ **“կար**՝ այս վերջին ձևից **“կար/ցԿ Ի /ամբ/բ/”** հ.– ե. անբուն (անթեմատիկ) հիմքի հոգնակի և երկակի թվի գործիականի համար /’–bhis, –’bho/ կամ բնավոր (թեմատիկ) հիմքի երկակի թվի /’bjo/<sup>21</sup>: Ստ. Օրբելյանը Գեղարքունիք գավառում հիշատակում է **Շիկակարք** անունով գյուղ<sup>22</sup>:

### ՅԱՆՈՒՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Տես Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986թ., էջ 399–400 Գարկացուցակում, անշուշտ, նշված են միայն Տաթևի վանքին հարկատու գյուղերը
- <sup>2</sup> Կապ՝ «ուղի», «ճանապարհ» բառն է:
- <sup>3</sup> Ս. Խանզադյան, Գայրենապատում, գիրք Բ, Երևան, 1981, էջ 166–167
- <sup>4</sup> Տես Ստ. Օրբելյան, նշվ աշխ., էջ 399 Եազուայ գյուղանունը, ըստ Ս. Ումառյանի, խնթական հնչյունը նշանակում է ծիսարար (Ս. Ումառյան, Սյունիքը դիցարան, Երևան, 1981թ., էջ 39) Դժվար թե անվանումը առաջացած լինի Գորիսի բարբառում տարածված շէք – երկու ոտքերի բացվածք», «լայն քայլ» բառից:
- <sup>5</sup> **Ղոճոտ–Ղոճեն**, խոշոր ավազ (տես է Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (Դ–Ֆ), Երևան, 1976, էջ 931):
- <sup>6</sup> Ա. Դարագյոզյան, Չազենոթի տեղադրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, 7, էջ 59 Տես նաև А. Карагезян, Сюник, Махчавад и Голти, Ереван, 2002, с. 34.
- <sup>7</sup> Գ. Գյուրջման, Գին հայրը տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 299
- <sup>8</sup> Ս. Խանզադյան, նշվ. աշխ., էջ 180:
- <sup>9</sup> Գ. Գյուրջմանը Վայոց ծորում հիշատակում է **Աղջրտափ** կամ **Աղջրատափ** տեղանունը (տես Գ. Գյուրջման, նշվ. աշխ., էջ 299):
- <sup>10</sup> Ալեքսրկներ միջին զրական հայերենի պատմության, Երևան, 1972, էջ 144
- <sup>11</sup> Ավաղ. Պ. Գեղունին, Սիսիանի Չորաց քարեր հնավայրը ուսումնասիրելով և այն դիտելով որպես ինագույն աստղադիտարան, առաջարկում է կոչել **Ջարահունք** (տես Սյունիք լրագիր, 1996թ., քիվ 4, նան՝ Ազգ լրագիր, 2003թ., 16 ապրիլ): Գնավայրի տարածքը ընկնում էր **Այլախ** գավառի մեջ:
- <sup>12</sup> Տես Գովի. կաթողիկոս Դրասխանակերտցի, Գայոց պատմություն, աշխատասիրությամբ՝ Գ. Թոսունյանի, Երևան, 1996թ., էջ 334–335
- <sup>13</sup> Տես ժամանակագրություն Ստեփանոսի Օրպելեանի, Երևան, 1942թ., հավելված, էջ 12: Աբ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973թ., էջ 151:
- <sup>14</sup> Գր Սմառյան, Գայրեն արձատական բառարան, Գ., 1, Երևան, 1971թ., էջ 204

- <sup>11</sup> Տես Չ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987թ., էջ 130:
- <sup>12</sup> Տես Յր Աճառյան, Հայերեն արձատական բառարան. հատ III, Երևան, 1977թ., էջ 604:
- <sup>13</sup> Սյունները՝ *քարի հունը*, *քար քունք* և այլն. քիչ հավանական են և ոչ գիտական
- <sup>14</sup> Ալ. Սարգսյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975թ., էջ 498:
- <sup>15</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 263
- <sup>16</sup> Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988թ., էջ 147:
- <sup>17</sup> Չ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 430:
- <sup>18</sup> Տես Նուն տեղում, էջ 440
- <sup>19</sup> Н. Арутюнян, Бивинили, Ереван, 1970г., ст. 427:
- <sup>20</sup> Չ. Ջահուկյանը գտնում է, որ (\*ք<sup>4</sup>չ-) ծնով և իմաստով մոտ *կարկաթ*՝ «քարակույտ» (այստեղից՝ *կարկաթեյ*) բառը պատկանում է *կառ* արմատին, որ պահպանվել է *կառչիմ* (*կառուցանեմ*) բառի մեջ. որի ծագումը անհայտ է (Հայոց լեզվի պատմություն. նախ. շրջ., էջ 258) (\*ք<sup>4</sup>չ-) հմնտ *կորե-կորեու-կորեու-Գորիս*:
- <sup>21</sup> Քար բառը հոգնակի թվում հոլովվում է ի-ա ներդրական հոլովման պատկանող քառերի նմանությամբ՝ գործ.՝ քարամբջ (տես Ա Արրահայան, Գրաբարի ծեռնարկ, Երևան, 1964թ., էջ 51):
- <sup>22</sup> Չ. Ջահուկյան, նշվ աշխ., էջ 40
- <sup>23</sup> Տես Ատ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 397

*С. Ахвердян, М. Кумуни*

## ВПРОСЫ ЭТИМОЛОГИИ И ЛОКАЛИЗАЦИИ НЕКОТОРЫХ ТОПОНИМОВ, УПОМЯНУТЫХ СТ. ОРБЕЛЯНОМ

В статье предпринимается попытка выяснения генезиса ряда топонимов провинции Хабинд исторической губернии Сюник, основываясь на некоторых топонимических и лингвистических подходах. Затрагиваются вопросы локализации, проводится лексико-этимологический анализ, не столь окончательный, сколь интересный для изучающих как армянский язык, так и армянскую топонимику.

*S. Hakhverdyan, M. Kumunts*

## THE PROBLEMS OF ETYMOLOGY AND LOCALIZATION OF SEVERAL TOPONYMIES MENTIONED BY STEPANOS ORBELYAN

In this article there is tempted the clearing up of genesis of several toponymies of Haband province, historical state Syunik, based on some toponymic names and the linguistic approaches. Here are broached the questions of localization, carrying out the lexic- etymological analyzes, which are not so final, such interesting for them who study the Armenian language and the Armenian toponymy.